

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ-ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ՓՈԼ ԳԱԼԻՆԵԱՆԻ ԵՒ ԻՐ ՏԻԿՆՈՋ ԺԱՄԱՆՈՒՄԸ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏ-ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

(Շար. Բ. էջ 55)

Աղեքսանդրիոյ Հ.Բ.Լ.Միութեան վարչութեան ատենապետ տիար Սարգիս Վարձպետեան եւ իր ազնուափայլ տիկինը, փոխատենապետ տոքթ. Կարապետ Անսուրեան, գանձապահ տիար Նազարէթ Գարթալեան եւ իր համեստափայլ տիկինը, Չորեքշաբթի 12 Մայիս 1999 երեկոյեան ժամը 8.30-ին, Աղեքսանդրիոյ միջազգային օդանավակայանին մէջ դիմաւորեցին, Հ.Բ.Լ.Մ. Եզիպտոսի Նրջանակային Յանձնաժողովի կարգադրութեամբ ժամանող, արուեստագէտ-լուսանկարիչ տիար Փոլ Գալինեանն ու իր ազնուափայլ տիկինը, որոնք ինչ ինչ պատճառներով, տարւայ մը յապաղումէ ետք կուգային Յունաստանէն:

Բարի գալստեան մաղթանքով տիկին Մակի Վարձպետեան, յանուն Հ.Բ.Լ.Միութեան յանձնեց գեղեցիկ ծաղկեփունջ մը տիկին Գալինեանին, ապա խումբը ուղղուեցաւ ծովափնեայ Mercure առաջնակարգ պանդոկ, ուր հանգիստ պայմաններու տակ տեղի ունեցաւ խորհրդակցական հանդիպում - պատուասիրութիւն ի պատիւ հիւրերուն եւ որոշուեցաւ Հինգշաբթի ըլլայ հիւրերուն հանգիստի օր եւ երեկոյթի կարգադրութեանց:

Երեկոյեան ժամը 9-ին, քաղաքիս Գեղարուեստից թանգարանին մէջ, ի ներկայութեան հայ եւ եզիպտացի հոծ բազմութեան ներկայացուեցաւ Փոլ Գալինեանի պատրաստած «Ուլիլըմ Սարոյեան Մարզը, Գրողը» մէկ ժամեայ 16 միլիմետր սեւ, ճերմակ, սրճագոյն եւ գունաւոր ժապաւէնը, որ արժանացած է մրցանակներու:

Ներկայ էին Աղեքսանդրիոյ

հոգեւոր հովիւ Արթ. Տ. Գրիգոր ԲՏՆՅ. Մուրատեան, Հայ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Վերպ. Վահրամ Խունկանեան, Պատ. Քաղաքական ժողովի ատենապետ տիար Մկրտիչ Խանճեան եւ իր համեստափայլ տիկինը, Աւստրիոյ ընդհ. հիւպատոս եւ Աղեքս. Հ.Բ.Լ.Մ.ի պատուոյ նախագահ տիար Վահան Ալեքսանեան եւ իր ազնուափայլ տիկինը, Գեղարուեստից թանգարանի տընօրէն տոքթ. Մահմուտ Ապտէլ Ուահապ եւ իր տիկինը, «Տիգրան Երկաթ» Հայ Մշակ. Միութեան պատուոյ նախագահ տիար Գէորգ Փիլիկեան, նոյն միութեան ատենապետ տիար Մանուկ Գալիւքճեան, Հ.Մ.Մ. «Կամք»ի ատենապետ տոքթ. Արմէն Գալուքճեան, մշակութային եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներ: Այդ առթիւ «Յանաջգիմասէր» Մշակ. Ընկերակցութիւնը ծաղկեկողով մը ղրկած էր:

Անգլիերէն լեզուով բացման խօսքը կատարեց Օր. Գարին Լէյլէկեան ծանօթացնելով պրն. Փոլ Գալինեանի կենսագրութիւնը ու ժապաւէնին մասին տուաւ տեղեկութիւններ, որուն արարեղէն թարգմանութիւնը կարդաց Աղեքս. Հ.Բ.Լ.Մ-ի վարչութեան ատենադպիր տիար Խաչիկ Մազլըմեան:

Շարժանկարի ներկայացումէն յետոյ Օր. Մարի Մազլըմեան սահուն անգլիերէնով կարդաց Ուլիլըմ Սարոյեանի նըւիրուած 1991 թուականին Սովիէթ Միութիւն եւ ԱՄՆ հրապարակած որպէս խաղաղ գոյակցութեան խորհրդանիշ զրոշմաթուղթին մասին: Ապա հրատարակուեցաւ շարժանկարին հեղինակը իր խօսքը ըսելու:

Պրն. Փոլ Գալինեան նախ անգլիերէնով եւ ապա հայերէնով իր շնորհակալութիւնը յայտնեց թանգարանի տնօրէնին եւ Հ.Բ.Լ.Մ.ի վարչութեան ատենապետին, տիար Հրանդ Վարձպետեանին, որ հաղորդացանցի (internet) միջոցով երկար ժամանակ կապ հաստատած էր իր, Գեղարուեստի թանգարանի տնօրէնութեան ու ներկայ հասարակութեան հետ:

Պրն. Փոլ Գալինեան հարցազրոյց ունեցաւ ներկայ հանրութեան հետ եւ բոլորին հետաքրքրութեան գոհացում տուաւ անգլիերէն եւ հայերէն լեզուներով: Հայերէնի արարեղէն թարգմանութիւնը կատարեց պրն. Խաչիկ Մազլըմեան: Ապա տեղի ունեցաւ զովացուցիչներու եւ անուշեղէններու ընդունելութիւն որ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 11.30 եւ ներկաները շնորհաւորեցին պրն. Փոլ Գալինեանն ու իր տիկինը այս մեծ գործին համար, որ ոչ միայն արուեստագիտական գծով այլեւ Ամերիկահայ արժէքաւոր գրող Սարոյեանը աշխարհի ժողո-

վորներուն ծանօթացնելու գնահատելի աշխատանք մըն է:

Աղեքս. Հ.Բ.Լ. Միութեան անդամները իրենց կարելիութեանց սահմաններու մէջ միշտ գտնուեցան հիւրերուն լքով, պտըացուցին Աղեքսանդրիոյ տեսարժան վայրերը, պատմական թանգարանները, յուշուկութողները, Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի, Ազգային Առաջնորդարան, Պողոս պէյ Եոսուֆեանի, Նուպար փաշայի դամբարանները, Սայէտ Տարուիչ թատրոն, ուր կը գտնուի Նուպար փաշայի արձանը, զոր տեսաերկրի առաւ, տեղեկանալով անոր ունեցած պետական հանգամանքը:

Ուրբաթ 14 Մայիսի երեկոյեան, Հ.Բ.Լ.Մ.ի Աղեքսանդրիոյ վարչութեան ատենապետ պրն. Սարգիս Վարձպետեան եւ իր տիկինը, պրն. Փոլ Գալինեանի Ֆիլմին գտած յաջողութեան եւ ի պատիւ անոր եւ կողակցին, ճաշկերոյթ - ընդունելութիւն տրուեցաւ Club d'Alexandrie-ի շքեղ սրահներէն միոյն մէջ, որուն ներկայ գտնուեցան միութեանս պատուոյ նախագահ տիար Վահան Ալեքսանեան եւ իր ազնուափայլ տիկինը, վարչութեանս անդամները եւ իրենց տիկինները, որուն ընթացքին տեղի ունեցաւ մտերմիկ զրոյցներ եւ յիշատակի լուսանկարումներ:

Երկուշաբթի 17 Մայիսի գիշերուան, տէր եւ տիկին Վահան Ալեքսանեաններ իրենց բնակարանին մէջ, ի պատիւ յարգելի հիւրերուն ողջերթի ճաշկերոյթ կազմակերպեցին, որուն ներկայ գտնուեցան վարչութեանս անդամները իրենց տիկիններով, որուն տեղի ունեցան զրոյցներ Սարոյեանի Ֆիլմին եւ համայնքային հարցերու շուրջ: Այդ ջերմ մթնոլորտին պրն. Գալինեան շնորհակալութեան իր խօսքը ուղղեց հիւրընկալ պատուոյ նախագահին եւ տիկինոջ սարքած իրենց ի պատիւ ընդունելութեան եւ իր խօսքին մէջ ըսաւ. «Ամէն մէկ յաջողած այրին ետին կը գտնուի կին մը. իմ պարագայիս կինս՝ Արաքսին է որ այս գործին մէջ միշտ ինձի թիկունք կանգնած է»: Իսկ պրն. Ալեքսանեան ըսաւ. «Մենք պէտք է շնորհակալ ըլլանք ձեզի, այսպիսի մեծ գործ մը պատրաստած ըլլալնուդ համար, որով օտարներուն կը ծանօթացնէք Ուլիլըմ Սարոյեան մարզը, գրողը որ հայ արժէքներէն մին է»:

Յաջորդ օրը, վարչութեան անդամներ՝ տեսրք Նազարէթ Գարթալեան եւ Հրանդ Վարձպետեան ողջերթ մաղթեցին յարգելի հիւրերուն եւ յաջողութիւն Գահիրէ իրենց այցելութեան:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՒԱՆ ԱՂԵՔՍ.
Հ.Բ.Լ.Մ. Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
Աղեքսանդրիա, 25 Մայիս 1999

ՈՐՈՒ ԻՐԱՆՈՒԹԵՒՄԸ

ին
ան
եւ
ին
եր
գ-
եւ
ե-
էն
եւ
ե-
ւկ
սը,
մ-
ւն
ան
ըս
ւյ

ՔԱՉԱԼԵՐԵՑԷՔ
ՀԱՅ ԹԵՐԹԸ

(Շար.ը տեսնել Գ. էջ)